ՀԵՍՈՒՐՍՆ ԵՒ ՀԵՍՈՒՐՍՆԱԿՑԱՆՆԵՐ

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ
(1849-1920)

Կարապետ Կոստանեանը ծնուել է 1849 թ. յունուարի 14-ին Ալեքսանդրապոլ քաղաքում՝ Տէր Յովսէփ քահանայ Կոստանեանի ընտանիքում: Նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրում, այնուհետեւ ուսումը շարունակել Թիֆլիսի ռուսական գիմնազիայում: 1870 թ. աւարտելով գիմնազիան՝ Կ. Կոստանեանն ընդունւում է Ս. Պետերբուրգի Կայսերական համալսարանի Արեւելեան լեզուների ֆակուլտետ: Նրա ուսման հովանաւորութիւնն ստանձնում է Գէորգ Դ. Ուսումնասէր Կաթողիկոսը: Ս. Պետերբուրգում Կոստանեանն աշակերտում է նշանաւոր հայագէտ Քերովբէ Պատկանեանին: 1878 թ. յաջողութեամբ յանձնելով աւարտական քննութիւնները՝ Կ. Կոստանեանը վերադառնում է հայրենիք: Գէորգ Դ. Կաթողիկոսի առաջարկութեամբ նա աշխատանքի է անցնում Ճեմարանում, որտեղ աւանդում է հայոց լեզու, Հայաստանի աշխարհագրութիւն, հայոց պատմութիւն եւ հայ հին գրականութիւն (մատենագրութիւն) առարկաները: Խաչատուր Կանայեանի յուշերում մի գեղեցիկ դրուագ է պահպանուել Կարապետ Կոստանեան մանկավարժի վերաբերեալ. «Իր արտահագուստի բազում գրպաններում դրած ունէր վենետիկեան հրատարակութեան մեր մատենագիրները, որոնք, ի պահանջել հարկին, հանւում էին գրպանից եւ ընթերցւում լսարանում»[1]:

Մինչեւ 1890-1891 ուսումնական տարուայ աւարտը Կոստանեանը Ճեմարանում վարում է ուսուցչի պաշտօն: Նոյն թուականի ամռանը Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան առաջարկով ընդունում է տեսչի պաշտօնը, մեկնում Թիֆլիս եւ աշխատանքային երեք տարիների ընթացքում համբաւ է ձեռք բերում որպէս ուսումնական գործի հմուտ կազմակերպիչ: 1894 թ. յուլիսի 21-ին Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոսը հայրապետական յատուկ կոնդակով Կ. Կոստանեանին նշանակում է Գէորգեան ճեմարանի տեսուչ՝ «պատուիրելով ...աւարտել զգործս... ի [Ներսիսեան] Դպրանոցին եւ փութալ ընդունել զհաշիւս եւ զայլ գոյս Ճեմարանին»[2]:

1 **Խ. Կանայեան,** Իմ յուշերը Գէորգեան ճեմարանից. «Էջմիածին», 1964, Զ., էջ 29-30:
2 Տե՛ս **«Արարատ»,** 1894, էջ 261:

Նոր պաշտօնում Կ. Կոստանեանն ընդհանուր առմամբ ունենում է արգասաբեր գործունէութեան ութամեայ մի շրջան: 1899 թ. յունիսի վերջին տեւական բուժումներ ընդունելու եւ առողջութիւնը վերականգնելու մտադրութեամբ թողնում է տեսչի պաշտօնը, որը վերստին ստանձնում է 1902-1905 թուականներին:

Կարապետ Կոստանեանի տեսչական տարիները այսպէս է գնահատում նրա աշակերտներից անուանի հայագէտ Երուանդ Տէր-Մինասեանը. «Կարապետ Կոստանեանի տեսչութեան տարիները Գէորգեան ճեմարանում (1894-1895-1898 եւ 1899 ուս. տարիներ) այդ հիմնարկի լաւագոյն եւ ամենաարդիւնաւէտ տարիների թուին են պատկանում: Ամենից առաջ այդ տեսակէտից պէտք է շեշտել այն հանգամանքը, որ Կ. Կոստանեանը կազմել էր այն ժամանակուայ պայմաններում մի լաւագոյն ուսուցչական խումբ, որի անդամներն էին յայտնի գիտնականներ Կարապետ Տէր-Մկրտչեանը, Գարեգին Յովսէփեանը, բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանը, հռչակաւոր մանկավարժ Սեդրակ Մանդինեանը, հանճարեղ երաժիշտ Կոմիտասը, Գերմանիայում իր ուսումն աւարտած Նիկ. Քարամեանը, Մանուկ Աբեղեանը (վերջին տարում), հրապարակախօս եւ գրականագէտ Մինաս Բէրբէրեանը, մաթեմատիկայի եւ ֆիզիկայի ուսուցիչ Պետրոս Տիգրանեանը, հմուտ գրաբարագէտ Սէթ Յարութիւնեանը, պատմութեան եւ գերմաներէնի դասատու բանասէր Ստեփան Կանայեանը եւ ուրիշներ: Վարչական գործերում նրան օգնում էր տեսչի օգնական նշանակուած Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեանը»[3]:

Այս մէջբերումից ակնյայտ է դառնում, որ ի դէմս Կ. Կոստանեանի՝ գործ ունենք ոչ միայն փորձառու մանկավարժի, այլեւ ուսումնական գործի հմուտ կազմակերպչի հետ, որի աշխատանքի արդիւնքը նշանաւոր ճեմարանականների այն սերունդն է, որ իր անուրանալի ներդրումն ունեցաւ հայրենական կեանքի վերաշինութեան հարցում՝ հայագիտութեան, մշակութային եւ քաղաքական կեանքի բոլոր ասպարէզներում:

Գէորգեան ճեմարանը ղեկավարելուն զուգահեռ՝ Կարապետ Կոստանեանն իր բազմաբնոյթ ուսումնասիրութիւններով նպաստում է նաեւ «Արարատ» ամսագրի հեղինակութեան բարձրացմանը: Այստեղ նա տպագրում է հայ միջնադարեան գրականութեան ներկայացուցիչների ստեղծագործութիւններ, բանասիրական ուսումնասիրութիւններ, Հայ Եկեղեցու պատմութեան, ազգային արժէքների, եկեղեցական եւ մշակութային գործիչների մասին հետազօտութիւններ, որոնցից կարող ենք առանձնացնել հետեւեալները՝ «Հայաստան եւ Միջագետք դիւցազնական դարերում», «Հայոց հեթանոսական կրօնը», «Հայոց վանքերը», «Ս. Էջմիածնի նշանակութիւնը հայ

3 **Ե. Տէր-Մինասեան,** Յուշեր իմ կեանքից, Երեւան, 2005, էջ 35:

ժողովրդի կեանքում», «Ս. Լուսաւորչի Աչը», «Կանոն Թադէոսի առաքելոյն», «Ժողովրդական եւ կրօնական տօների մասին», «Հին յիշատակներ» եւ այլն:

1911 թ. Կ. Կոստանեանին առաջարկում է վարել Մոսկուայի Արեւելեան լեզուների ինստիտուտի (Լազարեան ճեմարան) տեսչի պաշտօնը: Նոյն թուականին նա մեկնում է Մոսկուա: Որպէս հաստատութեան տեսուչ ու դասախօս՝ Կ. Կոստանեանը Լազարեան ճեմարանում աշխատում է մինչեւ կեանքի վերջը՝1920 թուականը:

Կ. Կոստանեանն իր մահկանացուն կնքել է 1920 թ. յունուարի 1-ին եւ թաղուել Մոսկուայի Վագանկովեան գերեզմանոցի հայկական մասում:

Բազմաբեղուն է անուանի հայագէտ Կ. Կոստանեանի գիտահետազօտական վաստակը, որն ընդգրկում է բնագրագիտական, գրականագիտական, պատմաբանասիրական եւ կրօնագիտական բնոյթի ուսումնասիրութիւններ: Նա հայագէտ էր բառի դասական իմաստով, խորապէս գիտակ՝ նիւթի գրեթէ բոլոր ոլորտներին եւ շերտերին: Նրա՝ Հայոց Եկեղեցու պատմութիւնը (3500 էջ), ի թիւս այլ կարեւոր հետազօտութիւնների, դեռեւս մնում է անտիպ: Գիտնականի ժառանգութեան համակողմանի արժեւորումը, գործունէութեան վերհանումն այսօր եւս արդիական է հայագիտութեան համար: Կ. Կոստանեանի առաջարկած մի շարք տեսակէտներ կարող են ուղենշային լուծումներ տալ Հայ Եկեղեցու պատմութեան, մատենագրութեան եւ առհասարակ պատմաբանասիրական քննարկումներին վերաբերող մի շարք հիմնախնդիրների մեկնաբանման առնչութեամբ: Ցաւով պէտք է նկատենք, որ նա անհրաժեշտ չափով յայտնի չէ մեր հասարակութեանը: Նրա ժառանգութեանը տեղեակ են միայն նեղ մասնագիտական շրջանակներում, մինչդեռ ներկայիս ուսումնասէր սերնդի համար Կ. Կոստանեանը կարող է ներշնչման օրինակ լինել ոչ միայն իբրեւ հայագէտ, այլեւ որպէս հայ մտաւորական:

Գէորգեան հոգեւոր ճեմարանի Պատմական աստուածաբանութեան եւ հումանիտար առարկաների ամբիոնը, ելնելով նշուածից, հրատարակութեան է պատրաստել Կ. Կոստանեանի «Արարատի ժառանգութիւն» հատորը, որի լոյս ընծայմամբ ընթերցասէր հասարակութիւնն առաջին անգամ հնարաւորութիւն կունենայ ընդհանուր պատկերացում կազմելու մեծ հայագէտի գիտական հետաքրքրութիւնների մասին, եւ ինչու չէ, գուցէ այս նոր հատորը խթան կդառնայ, որ մեր օրերի ուսումնասիրողներից ոմանք ցանկութիւն ունենան զբաղուելու նրա գիտական ժառանգութեան քննութեամբ:

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆԻ «ՊԱՏԿԵՐՆԵՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ» ՅՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Էջմիածին» ամսագրի «Ճեմարան եւ ճեմարանականներ. փաստեր եւ վկայութիւններ» շարքից ընթերցողին է ներկայացուում Կարապետ Կոստանեանի «Պատկերներ Ս. Էջմիածնի վանական կեանքից» անտիպ յուշագրութիւնը: Աշխատութիւնը յայտնաբերուել է Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարանում, 82 ֆոնդի ներքոյ պահուող՝ Կարապետ Կոստանեանի արխիւում: Աշխատութիւնը պահպանուել է ընդամենը մէկ օրինակով. այն բաղկացած է ձեռագիր 12 էջից:

Բնագրի ստեղծման ժամանակը

Բնագրում ստեղծման ժամանակը նշուած չէ, սակայն այն կարելի է պայմանականօրէն վերականգնել՝ հիմք ընդունելով երկու հանգամանք՝

ա. նիւթի բովանդակութիւնը,

բ. հեղինակի կենսագրութիւնը:

Նիւթի ընթերցանութիւնը մեզ յուշում է, որ հեղինակը շարադրել է այն Էջմիածնում գործած ժամանակ, քանի որ գրուած է ականատեսի հայեացքով, ներսի մարդու տպաւորութեամբ, մի ժամանակաշրջանում, երբ Կ. Կոստանեանը հնարաւորութիւն ունէր ի մօտոյ հաղորդ գտնուելու Մայր Աթոռի վանական կեանքին:

Կ. Կոստանեանի կենսագրական տուեալների վրայ հիմնուելով՝ նրա էջմիածնական գործունէութիւնը կարելի է բաժանել երեք շրջանի.

ա. 1878-1891 թթ.՝ ուսուցիչ Գէորգեան ճեմարանի,

բ. 1894-1899 թթ.՝ տեսուչ Գէորգեան ճեմարանի,

գ. 1902-1905 թթ.՝ տեսուչ Գէորգեան ճեմարանի:

Յիշեալ տուեալների զուգորդումը շարադրանքի բովանդակութեան հետ օգնում է վերականգնել գրութեան մօտաւոր թուականը:

Բանն այն է, որ հեղինակն իր յիշողութիւնները բաժանել է հինգ շրջանի, որը հետեւեալ տեսքով արտացոլուած է նաեւ խորագրերի ներքոյ.

ա. Տ. Ներսէս Է. Կաթողիկոսի հայրապետութեան շրջան,

բ. Տ. Մատթէոս Ա. Կաթողիկոսի հայրապետութեան շրջան,

գ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսի հայրապետութեան շրջան,

դ. Տ. Մակար Ա. Կաթողիկոսի հայրապետութեան շրջան,

ե. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի հայրապետութեան շրջան:

Հակառակ վերոյիշեալ գլխաբաժանումների՝ բնագրում իսպառ բացակայում է Մակար Ա. եւ Մկրտիչ Ա. կաթողիկոսների շրջանը (Դ. եւ Է. շրջանները). նիւթն աւարտւում է Գէորգ Դ.-ով:

Հիմնուելով այս փաստի վրայ՝ բնագրի գրութեան թուականը, հետեւաբար, կարելի է տեղադրել Կ. Կոստանեանի էջմիածնական գործունէութեան առաջին շրջանում՝ 1878-1891 թթ. միջեւ, երբ 1878 թ. Գէորգ Դ. Մեծագործ Կաթողիկոսի կողմից Կ. Կոստանեանը հրաւիրուել է Էջմիածին՝ Հոգեւոր ճեմարանում դասաւանդելու:

Նկատի առնելով, որ բնագրում բացակայում է Մակար Ա. եւ Մկրտիչ Ա. կաթողիկոսների շրջանը՝ հարկ է եզրակացնել նաեւ, որ Կ. Կոստանեանի աշխատութիւնն ըստ էութեան անաւարտ է: Այս իրողութիւնը, սակայն, բնաւ չի ազդում աշխատութեան աղբիւրագիտական կարեւորութեան եւ պատմական արժէքի վրայ:

Բովանդակութիւնն ու կառուցուածքը

Բնագրում նկարագրւում են ԺԹ. դարի երկրորդ կէսի Էջմիածնի միաբանութեան ներքին կեանքի դրուածքը, վանականների կենցաղավարութիւնը, սովորոյթները: Միեւնոյն ժամանակ, հեղինակի բնութագրմամբ անդրադարձ է կատարւում նաեւ «իրենց ժամանակին նշանակութիւն ունեցող» պատմական անձնաց եւ այլ հետաքրքիր մանրամասների:

Նկատելի է, որ նիւթի տրամաբանական շարադրանքի մէջ զգացւում է հետեւողականութեան պակաս, սա միգուցէ պիտի պայմանաւորել այն հանգամանքով, որ հեղինակը չի աւարտել յուշագրութիւնը, համապատասխան խմբագրման չի ենթարկել, այլ առաջնորդուել է իր յիշողութեամբ՝ գրի է առել այն, ինչ որ շարադրանքի ընթացքում մտաբերել է: Ասուածի օրինակ կարելի է համարել այն, որ Մատթէոս Ա.-ի կաթողիկոսութեան շրջանի մասին հեղինակը մասնաւոր տեղեկութիւններ չի հաղորդում, առաւելապէս խօսում է Ղուկաս արք. Արագածունու տեղապահութեան շրջանի մասին, ապա անմիջապէս անցնում Գէորգ Դ.-ին: Ակնյայտ է, որ հեղինակը նպատակ չի ունեցել համակարգուած շարադրանք ներկայացնելու, այլ իր ընթերցողին է փոխանցում Էջմիածնի վանական կեանքի ընդհանուր դրութիւնը, նրան բնորոշ իրայատկութիւնները:

Աշխատութեան վերջում հեղինակը երկու ցանկ է զետեղել. մէկում՝ վանական կեանքին բնորոշ յատկանիշների եւ տեղ գտած արատաւոր երեւոյթներին վերաբերող 5 կէտից բաղկացած շարք է, միւսում՝ անձնանունների երկու ցանկ. այստեղ Ներսէս Ե. եւ Մատթէոս Ա. կաթողիկոսների շրջանի եկեղեցական նշանաւոր դէմքերի անուններն են: Բացակայում են ինչպէս Գէորգ

Դ.-ի, այնպէս եւ նրան յաջորդող կաթողիկոսների շրջանի եկեղեցական կարեւոր անձանց ցանկերը:

Յիշեալ երկու ցանկում ներգրաւուած անձինք հաւանաբար այն առանցքային կերպարներն են, որոնց մասին հեղինակը խօսում է, կամ թէ ծրագրել է խօսել իր աշխատութեան մէջ: Ինչու ենք ասում «ծրագրել է խօսել», քանի որ երբ յիշեալ ցանկերը համեմատում ենք բնագրի բովանդակութեան հետ, տեսնում ենք, որ նշուած անուններից ոչ բոլորն են ներգրաւուած շարադրանքում, իսկ ոմանց մասին իրապէս խօսւում է: Այս անհետեւողականութեան լուծումներից մէկն այն կարող է լինել, որ միգուցէ այդ նշումները հեղինակը պարզապէս իր համար է արել, որպէսզի նիւթի մէջ անդրադարձ կատարի յիշեալ անձանց, սակայն շարադրանքի ընթացքում ընտրողական վերաբերմունք է ցուցաբերել նշումների հանդէպ:

Աշխատանքի ժանրը, ոճը եւ աղբիւրները

Աշխատութիւնը պատկանում է յուշագրական ժանրին, այն շարադրուած չէ խիստ գրական, առաւել եւս՝ ակադեմիական լեզուով: Հեղինակը հաւանաբար միտումնաւոր է կիրառել բառեր եւ հասկացութիւններ այն տարբերակներով, որոնք տուեալ միջավայրում են գործածուել, անմիջականօրէն վերցուած են Էջմիածնի վանական առօրեայից, օրինակ՝ շամտան, շիմշիր, սամավար, գիւգիւ, մոնթ, անտիքմուար: Կ. Կոստանեանը, ամենայն հաւանականութեամբ, առաջնորդուել է այն համոզմամբ, որ տուեալ գրական հնարքն ընթերցողին աւելի է մօտեցնում այն միջավայրին, իրայատուկ մթնոլորտին, որի մասին խօսւում է շարադրանքում:

Հեղինակն իր նիւթը չի հիմնել պատմական աղբիւրների կամ յիշատակարանների վրայ, այլ՝ սեփական յիշողութիւնների եւ անձնական ծանօթութիւնների, ինչպէս որ շեշտում է իր համառօտ առաջաբանում. «Մենք աչքի առաջ ունենք մեր յիշողութեան մէջ հինգ շրջան եւ անձամբ ծանօթ ենք եղել վանական դէմքերի....», կամ թէ՝«...կար ժամանակ, որը ես ինքս լաւ յիշում եմ....»: Նիւթի մէջ սակայն կան դէպքեր, երբ Կ. Կոստանեանը յղում է իր լսած բանաւոր աւանդութեանը, ինչպէս օրինակ՝ «...պատմում են մի աւանդութիւն, չգիտեմ որ վարդապետի համար....», կամ՝ «Ես չեմ տեսել, թէ առաջ ինչպէս էին ուտում ընդհանուր սեղանի վրայ, բայց ինձ պատմել են....»: Սա նշանակում է, որ հեղինակը ոչ միայն սեփական տեսածն է յիշողութեամբ գրի առել, այլեւ բանաւոր հարցումների միջոցով խորամուխ է եղել նիւթի էութեան մէջ՝ չունենալով իր ձեռքի տակ գրաւոր որեւէ աղբիւր կամ աշխատութիւն տեսածի կամ լսածի պատմական վաւերականութիւնը ստուգելու համար:

Աշխատության պատմական արժէքն ու արդիականութիւնը

Այս աշխատութիւնն արժէքաւոր է մի քանի իմաստով.

ա. Հեղինակը գրում է իբրեւ ժամանակակից, երեւոյթների եւ իրադարձութիւնների ականատես վկայ: Միեւնոյն ժամանակ նրա դիտարկումները ներսի մարդու տպաւորութիւններն են արտայայտում, մէկի, որը ծանօթ է իրականութեանը հէնց ներսից: Իհարկէ, չի բացառում, որ որոշ հատուածներում հեղինակն իր անձնական տպաւորութիւններով է առաջնորդուել, կամ ինչ-որ հարցերի վերաբերեալ նրա առաջարկած մեկնաբանութիւնը չենք կարող միանշանակ ընդունել: Սակայն սա իր հերթին առիթ կարող է լինել այս կամ այն խնդիրը, երեւոյթը պատմական հետազօտութեան նիւթ դարձնելու, խորամուխ լինելու այդ հարցի պարզաբանման մէջ:

բ. Միեւնոյն ժամանակ նիւթի ընթերցումից պարզ է դառնում, որ հեղինակն իրերի եւ երեւոյթների նկատմամբ փորձել է հնարաւորին չափ անկողմնակալ լինել. դրա արտայայտութիւն պէտք է համարել յատկապէս այն քննադատութիւնը, ըստ որի՝ նա անընդունելի է համարում Էջմիածնի միաբանական կեանքում եւ յատկապէս միաբանների կենցաղում տեղ գտած որոշ երեւոյթներ, ինչպէս օրինակ՝ անազնութիւնը, ագահութիւնը, անհաւատարմութիւնը սեփական կոչման եւ առաքելութեան հանդէպ: Այսօր կարիք չկայ բարդոյթաւորուելու, բացասաբար ընկալելու այդ քննադատութիւնը. պէտք է ընդունել, որ առանց դրա հնարաւոր չէ տեսնել թերացումները, ապա եւ կամք դրսեւորել դրանք սրբագրելու, մեր կեանքից արմատախիլ անելու: Ասուածը ճիշտ է ի մասնաւորի վանական կեանքի առընչութեամբ, որտեղ աւելի շատ են գայթակղութիւններն ու փորձութիւնները, որոնց դէմ պայքարելու համար աւելի մեծ համբերատարութիւն եւ հաւատքի տոկունութիւն է պահանջւում:

գ. Աշխատութիւնն էական նշանակութիւն ունի ոչ միայն Հայ Եկեղեցու վանականութեան պատմութեան ուսումնասիրութեան տեսանկիւնից, այլեւ կարեւոր սկզբնաղբիւր է ԺԹ. դարի երկրորդ կէսի եւ Ի. դարասկզբի Հայ Եկեղեցու պատմութեան ուսումնասիրութեան համար, մանաւանդ, որ իր բովանդակութեամբ այն մեզ չի յիշեցնում նման այլ աշխատութեան մասին, յամենայն դէպս, մեզ ծանօթ չէ երկրորդը:

դ. Վերջապէս նիւթն առանձնայատուկ է մասնաւորաբար Ս. Էջմիածնի վանական կեանքի վերաբերեալ ներկայացուող սովորոյթների իմաստով: Ինչպէս յայտնի է վանականութեան պատմութիւնից, ամեն վանք ունեցել է իր իւրայատուկ դրուածքը, այս դէպքում սոյն բնագրի միջոցով գաղափար ենք կազմում Ս. Էջմիածնին բնորոշ վանական կեանքի, ներքին մթնոլորտի մասին:

Աշխատանքի արդիականությունը

Անդրադառնալով աշխատանքի արդիականութեանը՝ փաստենք, որ այն ոչ միայն ընդհանուր պատկերացում է տալիս Էջմիածնի միաբանական կեանքի անցեալի պատմութեան, վանական կենցաղի, հագ ու կապի, նիստ ու կացի, վարք ու բարքի, վանականների կեանքը եւ ներքին յարաբերութիւնները կարգաւորող սովորոյթների ու նորմերի մասին, այլեւ կարող է կիրառական նշանակութիւն ունենալ Մայր Աթոռի միաբանական կեանքի արդիւնաւէտ կազմակերպման համար՝ օգնելով վերականգնել ժամանակի ընթացքում որոշ մոռացուած գեղեցիկ աւանդոյթներ, սովորոյթներ, որոնք կարող են այս պատմական հարուստ միջավայրը վանական մթնոլորտին յատուկ բոյրով եւ ներքին ձգողականութեամբ օժտել:

Այս տեսանկիւնից սոյն յուշագրութիւնն այսօր եւս խթանող նշանակութիւն կարող է ունենալ վանական կեանքով ապրողների կամ հետաքրքրուողների համար. մանաւանդ նրանց, որոնք շահագրգռուած են հայ վանական կեանքի վերածնման գաղափարով եւ գործնական քայլեր են ակնկալում եկեղեցուց՝ իրենց նուիրումն ու եռանդն այդ ասպարէզում ներդնելու մեծ փափագով:

Մեր շնորհակալութիւնն ենք յայտնում Գէորգեան ճեմարանի Գործնական աստուածաբանութեան ամբիոնի գործավար-քարտուղար Գագիկ սարկաւագ Յովհաննիսեանին՝ բնագրի պատրաստման ժամանակ մեզ օգնելու, ինչպէս նաեւ անհրաժեշտ ծանօթագրութիւններով այն օժտելու համար:

Բնագրում հանդիպող բարբառային կամ փոխառեալ բառերի վերաբերեալ տողատակում տրուած են համապատասխան ծանօթագրութիւններ:

ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԵԱՆ
Վերատեսուչ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական
բարձրագոյն հաստատութիւնների
Տեսուչ Գէորգեան հոգեւոր ճեմարանի

ՊԱՏԿԵՐՆԵՐ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ա. շրջան Տ. Ներսէս Ե. Կաթողիկոսի Հայրապետութեան.
բ. շրջան Տ. Մատթէոս Ա. Կաթողիկոսի Հայրապետութեան.
գ. շրջան Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսի Հայրապետութեան.
դ. շրջան Տ. Մակար Ա. Կաթողիկոսի Հայրապետութեան.
ե. շրջան Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի Հայրապետութեան:

Ս. Էջմիածնի վանական կեանք ասելով՝ մենք հասկանում ենք այն նիստուկացը, որ ըստ աւանդութեան պարտաւորական էր ամեն մի միաբանի համար անխտիր, եւ այն բարքերը, որոնք իշխում էին վանականների մէջ եւ որոնք, սակայն, սովորաբար նոցա ներելի չէին, թէեւ չէին էլ հալածւում: Մենք աչքի առաջ ունենք մեր յիշողութեան մէջ հինգ շրջան եւ անձամբ ծանօթ ենք եղել վանական դէմքերի, որոնք իրենց ժամանակին նշանակութիւն ունեցող անձինք էին եւ ծանօթ են նաեւ Ս. Էջմիածնի պատմութեան մէջ: Մեր աչքի առաջ քայլ առ քայլ կերպարանափոխուել է վանական կեանքի ընդհանուր պատկերը. հները տեղի են տուել նորերին, արդեօք վա՞տն էլ տեղի է տուել լաւին, այն թող դատէ ընթերցողը. իսկ մենք ուրուագծենք ինչ որ տեսել ենք շրջան առ շրջան:

ա. Կար ժամանակ, որ ես ինքս լաւ յիշում եմ, երբ Ս. Էջմիածինը ներկայացնում էր մի միաբանութիւն, մի կուռ կազմակերպուած ընտանիք: Կար այնտեղ ներքին կարգապահութիւն, կուռ սահմանուած յարաբերութեան եղանակ մեծի եւ փոքրի, ծերի եւ երիտասարդի, ուսումնականի եւ հասարակի մէջ: Հայրն էր Կաթողիկոսը, ուներ գրեթէ անսահման իշխանութիւն նահապետական հիմունքների վերայ: Յիշում եմ, վանքի պարսպում վանականներն երեւում էին միմիայն որոշ ժամերին. եւ ոչ ոք իրենց խցից դուրս չէր յայտնւում առանց վերարկուի եւ առանց վեղարի: Ամեն մէկի վեղարի մի մասը ճակատից աւելի ցած էր իջնում եւ ծածկում էր աչքերը. նա մտիկ էր տալիս միայն առջեւն եւ գետնին. թեւերը կախ չէին այլ պարկեշտօրէն միացած դէպի ներքին լանջակողմը. եթէ մի վեղարաւոր հանդիպում էր միւս վեղարաւորին, որն իրենից աւագ էր կամ իրենից ծեր, խորը գլուխ էր տալիս՝ ձեռքերը կուրծքին դրած. եթէ աւագութեան աստիճանով էր որոշւում, կրտսերը վեղարն առնում եւ մօտենում էր աւագի աջն առնելու: Եթէ աւելի երկար պատահէր գաւթում իրար հետ խօսել, լինում էր երբեմն, որ աւագագոյնն իւր վեղարի ճակատն յետ էր ծալում՝ տէրողորմեան քաշելով գլոյց անում: Բայց այդ շատ հազիւ է

պատահում: Ով էլ որ հանդիպելիս լինէր վեղարաւոր վանականին՝ սարկաւագ, դպիր, աշխարհական ամեն կարգի, պէտք է գլուխ տային, գլուխները բանային եւ մօտենային նորա աջն առնելու: Այսպէս էր ամեն տեղ՝ վանքի պատերում եւ միշտ: Բոլորն էլ մի տեսակ էին հագնւում՝ տակից կապայ միեւնոյն կտորից, վերեւից վերարկու միեւնոյն մահուդից, ծերերը եւ հիւանդները կապայի վերայից վերարկուի տակ հագնում էին նաեւ կարճիկ[1]: Բոլորի հագուստի փոթը տրւում էր վանքից միեւնոյն ապրանքից. կարողն էր վանքի դերձակը, որ կարում էր միեւնոյն ձեւով եւ միեւնոյն ճաշակով: Բոլորի ոտնամանն էր հողաթափ, որ նոյնպէս վանքի մաշակարներն էին պատրաստում, մոնթերն[2] հագնում էին սովորաբար քողեր[3], որոնք հանում էին եկեղեցում: Բոլորն էլ հագնում էին բրդէ գուլպաներ, որ նոյնպէս տալիս էին վանքի հանդերձատնից: Մոնթերն ունէին տարբեր գլխարկ կամ ֆէս[4]: Հագուստեղէնի պատրաստութիւնն հանդերձապետ վանականի ձեռքն էր: Հանդերձատան պաշտօնեաների մէջ էին դերձակները, այնտեղ էր եւ հագուստեղէնի հարկաւոր մթերքների պահեստը, այնտեղ էր պատրաստւում բոլորի համար անկողին, սպիտակեղէն, գօտի, ոտնաման, գդակ եւ այլն: Սա մի աշխարհ էր, որն ունէր իւր առօրեայ չարն ու բարին, եւ որից կախւում էր միաբանութեան ամբողջ զգեստաւորումը: Նոյն դերձակներն էին պատրաստում նաեւ եկեղեցական զգեստները՝ փիլոն, ուրար, ժամաշապիկ, պատարագի զգեստ, սաղաւարտներ, վակասներ, եկեղեցական սպասների համար կարեւոր հանդերձեղէն՝ այն է գոգ, ծածկոց, վարագոյր եւ այլն: Հանդերձատան մէջ էր հաւաքւում եւ մեռնող վանականների ամբողջ կողոպուտը՝ հագուստ, սպիտակեղէն, տեղաշոր, ոտնաման եւ այլն: Սովորութիւն էր, որ այդ կողոպուտից շատ բաներ տալիս էին վանքի աղքատներին, չքաւոր գիւղական քահանաներին եւ տիրացուներին, պահում էին միայն շատ ընտիր եւ թանկագին բաները՝ դարձեալ միաբանութեան վերայ գործ դնելու համար: Այդպիսի բաների մէջ էին թանկագին ծաղկեայ փիլոններ, գորգեր. մուշտակներ, մետաքսեայ վերարկուներ (կերպաս կամ թաւիշ), ծաղկանկար հողաթափեր, գօտիներ եւ այլն: Այս տեսակ իրերը հանդերձատուն մտնում էին իբրեւ կողոպուտ, վիճակներից եկած, այն է՝ մեռնող առաջնորդների, յաջորդների, վանահայրերի, նշանաւոր քահանաների եւ այլն: Պէտք է ասել, որ մանաւանդ եպիսկոպոսները, վիճակաւոր առաջնորդութեան գնալով, վանքից հեռու ապրելով քաղաքներում, թողնում էին

1 Կամ բացթողում կա, կամ նկատի ունի կիսաբաճկոն:

2 Տես **Մ. Գաբամաճեան,** Նոր բառգիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910. կրօնական դպրոցի աշակերտ:

3 Հաւանաբար՝ ոտնաման:

4 Տես **Անդրանիկ վրդ. Կռանեան,** Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998. արեւելեան սրածայր կարմիր գլխարկ:

վանքի համեստ, անպաճոյճ սովորութիւնները եւ շատերը պճնում էին. մի քանի տեսակ ծաղկեայ փիլոն, մի քանի տեսակ խաս կապայ կամ վերարկու, միշտ սեւ անտիքմուար (հաւանաբար նկատի ունի՝ ֆրանս. մուար՝անտիկ)[5] վեղար, թանկագին լանջախաչեր եւ պանակէներ, թանկագին տէրողորմեաներ եւ այլն ամենի կողոպուտի մէջ էլ գտնւում էր, եթէ մեռնում էին վանքից հեռու: Դոքա բոլորն արեւելեան ճաշակին համեմատ պատրաստւում էին բազմերանգ խայտաբղէտ նիւթերից. ամենահամեստն էր սակայն սեւ ատլաս վերարկուն, սեւ ծաղկեայ փիլոնը եւ սեւ անտիքմուար վեղարը, սեւ սաթ տէրողորմեան: Շատ խոր տպաւորութիւն էին թողնում շատ վանականներ իրենց արտաքին տեսքով, կարծես ժամանակն էր, որ նոցա ծնում էր այնպէս վիթխարի հասակով, բարէթաւ մօրուքով, լայն թիկունքով եւ ուռած փորով. մեծ մասն այսպէս էին թէ՛ վանքի մէջ եւ թէ՛ վանքից դուրս: Նոքա, որոնք այդպէս չէին, կարծես նոցա շատ բան պակաս էր: Ոմանք սովորութիւն ունէին նաեւ երկար մազեր պահել, որոնք ուսերին ծածանում էին: Հանդերձատունը համարւում էր մասը վանքի գանձարանի, եւ ընդհանուր հսկողութիւնն ու հոգացողութիւնը վանքի գանձապետի վերայ էր, որը, սակայն, իւր ձեռքի տակ ունէր յատկապէս վանքի գանձարանը: Այս անունով կոչւում էր ոչ միայն այն տեղն, ուր պահւում էր վանքի դրամարկղը, սնդուկը, այլ առհասարակ այն տեղը, որ բացի սնդուկից պահւում էր Կաթողիկոսի կնիքի տակ ամեն մի թանկագին բան՝ թէ՛ եկեղեցական զարդանօթեղէնք, որոնք յետոյ փոխադրուեցան Մասանց խորանի կողքի թանգարանի մէջ, այլեւ ամեն արծաթեղէն, ոսկեղէն, ակնեղէն եւ այլ իրերը, որոնք ստացւում էին իբրեւ նուէր ուխտաւորներից կամ գնւում էին Վեհարանի պէտքերի համար եւ կամ պատկանում էին մեռնող վանականներին: Դոցա մէջ էին թանկագին ականակուռ եւ հասարակ լանջախաչեր, պանակէներ, տէրողորմեաներ, վեղարի խաչեր, մատանիներ, տուփեր, ժամացոյցներ, թասեր, գաւաթներ, դանակ, պատառաքաղ, ծաղկամաններ եւ այլն: Այդ գանձարանից էր կաթողիկոսը պարգեւատրում հոգեւորականներին եւ աշխարհականներին այս կամ այն թանկագին բանը: Գանձարանի եւ հանդերձատան հարստութեան գլխաւոր աղբիւրը մեռնող բարձրաստիճան հոգեւորականների ժառանգութիւնն էր եւ ուխտաւորների բերած ընծաները ժողովրդի կողմից: Երբեմն այդ իրօք պահւում էր, բայց հետզհետէ աղբիւրը ցամաքեցաւ շնորհիւ այն ընչաքաղցութեան, որ ժամանակին զարգացաւ վանականների մէջ: Հանդերձից զատ հասարակաց էր սնունդի մատակարարութիւնը. վանքում յառաջ իսկապէս երկու խոհանոց է եղել. ներսի կամ Վեհարանի խոհանոց, եւ դրսի կամ միաբանական

5 Տե՛ս **А. Д. Михельсон,** Объяснение 25.000 иностранных слов вошедших в употребление в русский язык, СПб, 1865. մետաքսեայ կամ կիսամետաքսեայ գունախաղով կտոր:

խոհանոց. վերջը աւելացաւ եւ երրորդը, այն է՝ պլանի խոհանոցը, ուր պատրաստում էին ագարակի ծառաների եւ մշակների համար: Այսպէս էր Ներսէս Ե. Կաթողիկոսի ժամանակ: Միաբանութեան բոլոր անդամները, տեղապահից սկսած մինչեւ վերջին ժամհարը, պէտք է կերակրուէին ընդհանուր սեղանից: Կար մի սեղանատուն, ուր ամենի տեղը որոշ էր. հանդիսաւոր օրերին Կաթողիկոսն էլ նոյն սեղանատան մէջ իւր առանձին տեղն ունէր: Երկու անգամ սեղանի զանգ էին տալիս. ցերեկուայ 12 ժամին եւ երեկոյեան ժամից յետոյ 6/7-ին. բոլոր միաբանները, զանգի ձայնին հետեւելով գալիս, գրաւում էին իրենց տեղերը, իրենց բաժին հացը, պանիրը, պաս օրերին բանջարեղէնն այնտեղ առատ տրուած էր լինում ամենի համար. երբ ներելի էր գինի տալ, դրուած էր լինում եւ գինին. սեղանի կարգադրութիւնը տնտես-վարդապետի ձեռքն էր, որը եւ հսկում էր կերակուրների մատակարարութեան վերայ: Ես չեմ տեսել թէ յառաջ ինչպէս էին ուտում ընդհանուր սեղանի վերայ, բայց ինձ պատմել են, որ դեռ Ներսէս Կաթողիկոսի ժամանակ չկար ո՛չ դանակ, ո՛չ պատառաքաղ եւ ո՛չ անձեռոցիկ, եւ ո՛չ էլ առանձին ափսէների գործածութեան սովորութիւն. սեղանը ծածկւում էր կապոյտ ծաղկաւոր դաստախոնով[6], տեղտեղ դրւում էին մի քանի լաթ՝ իբրեւ ջնջոց (մատի շոր), ուտում էին շիմշիր[7] կամ եղէգնեայ կամ փայտէ գդալներով, շատ անգամ բոլոր հինգ մատով ինչպէս սովորական է Ասիայում: Կերակուրները դնում էին ուտողների առաջ՝ 2-3-ին մի պղնձէ ամանով, եւ մեծ մասաւ ուտում էին մի տեսակ տաք կերակուր՝ գլխաւորապէս ապուր (թանէ սպաս), արգանակ (խահւի)[8], հէրիսայ, խաշ, տօն օրերին՝ 2-3 տեսակ տաք կերակուր. խառը կերակուրների մէջ միշտ յայտնի օրեր եղել է կողակ, տառեխ, սառը խաշլամայ, ձու, սէր, մածուն, կարագ, պանիր, զանազան թթուներ, պաս օրերին՝ ձիթապտուղ, ժախ[9], բոխի, զոխ, լոբի, սիսեռ, քուֆթայ, տոլմա եւ այլն: Բայց հին վարդապետներն ասում էին, որ Ներսէս Կաթողիկոսի ժամանակ վանքի սեղանը յաճախ այնպէս աղքատ ու միակերպ էր լինում, որ ուտել չէր լինում եւ ստիպուած էին մրգով ու բանջարեղէնով կշտանալ: Սովորական է եղել ուտիս օրերին միայն չըլպուր (ջրապուր), իսկ պաս օրերին՝ ոսպի ջուր. այդ երկու կերակուրները մերթ ընդ մերթ փոխ-

6 Տե՛ս **Ստ. Մալխասեան,** Հայերէն բացատրական բառարան, հտ. Ա., Երեւան, 1944. դաստախուն (պարսկ.՝ destexan) - սեղանի սփռոց:

7 **Ստ. Մալխասեան,** նշ. աշխ., հտ. Դ. - շիմշիր կամ տօսախ-ի կամ (ոյ), գ. (Բուս.). կաղան-չանազգիների կարգին պատկանող թուփ՝ մշտադալար հաւկթաձեւ՝ պիրկ ու փայլուն տերեւներով, մանր՝ դեղնագոյն-ճերմակ ծաղիկներով, սաստիկ կարծր՝ դեղին փայտով, որ շատ յարգի է ճախարակագործութեան, քանդակների եւ երաժշտութեան սրինգներ շինելու համար (Buxus sempervirens):

8 «Հայոց լեզուի նոր բառարան», աշխատ.՝ Գ. արք. Ճէրէճեանի, Փարմազ Տօնիկեանի, հտ. Ա., Պէյրութ, 1992. Խահուէ-սուրճ:

9 **Հր. Աճառեան,** Հայերէն արմատական բառարան, հտ. Բ., Երեւան, 1973. վայրի բողկ:

ւում էին միանման ձաւարով քաշովու[10] հետ: Այսպիսի աղքատութիւն ու միակերպութիւնն է եղել պատճառ, որ շատերը մանաւանդ եպիսկոպոսներից եւ ունեւոր վարդապետներից դադարել են սեղան յաճախել եւ կառավարուել են իրենց խցերում: Այս բանից եւ յառաջ է եղել դեռ Ներսէսի ժամանակներից սովորութիւն, որ հիւանդութեան պատճառով ոմանք սեղան չէին գնում եւ իրաւունք էին ստանում բաժին ունենալ մառանատնից հում փութ[11], իւղ, միս, բրինձ եւ այլն, նմանապէս խոհանոցից կերակուր տանել խուցը որոշ չափով: Այդ է լինում սկիզբը քայքայման, սեղանատունը մնում է բաժին միմիայն խեղճ ու կրակ վանականների, ժառանգաւորաց դպրոցի աշակերտների եւ եկուոր հիւրերի եւ ուխտաւորների: Շատ աւելի տուժուած են եղել այդ դրութիւնից խեղճ աշակերտները: Փորձուած է, որ վանքի ներքին կարգերի խիստ փոփոխութիւնը եւ շեղումը հիմնական կարգից միշտ տեղի է ունեցել տեղապահութեան ժամանակ, եւ այդ միշտ յօգուտ միաբանութեան առանձին անդամների, որոնք ժամանակին ունեցել են ազդեցութիւն: Ներսէսի մահից յետոյ մինչեւ Մատթէոսի նստիլն ազդեցիկ անձն էր տեղապահ Ղուկաս արքեպիսկոպոս Արագածունի մի անձ, որ երկար ժամանակ պահեց իւր ազդեցութիւնն իբրեւ խելացի մարդ: Նրանից միաբանութիւնը պատկառում էր այն պատճառով, որ վանքի մէջ թոյլ տուեց աւելի ազատ կենցաղավարութիւն. որքան եւ աւանդապահ, բայց քաշած լինելով հին ռէժիմի բեռը եւ դուցէ տուժած, ինքն ուզեց լինել աւելի ազատ իշխան վանքի մէջ, ունեցաւ իւր խոհանոցը, թոյլ տուեց ուրիշներին էլ իրենց խոհանոցը, եւ մտաւ վանքի մէջ մի դրութիւն, որ նման էր հարեւանական դրութեան առանձին ընտանիքներին, որոնք իրենց տունը հոգում էին առանձին մառանից:

Հին միաբանները, ստանալով հանդերձ եւ սնունդ եւ ապրելով իրենց խցերում միանգամայն ազատ, վայելում էին եւ այլ արտօնութիւններ. ստանում էին վառելիք իրենց խուցը տաքացնելու համար: Բուխարին կամ ծխանը, որ միակ վառարանն էր, նոյն խցի մէջ թէ՛ տաքացնելու պաշտօն ունէր, թէ՛ երբեմն եւ եփելու. կային խցեր, որոնք մի անձի էին, բայց կային խցեր, որոնց մէջ կային եւ այլ բաժանմունքներ, այն է՝ առանձին պահեստի տեղ, որ յետոյ դարձաւ մառան, եւ ծառայի կամ մոնթի տեղ, որը յետոյ դարձաւ նաեւ խոհանոց. խուցը տրւում էր՝ նայելով վանականի

10 **Ստ. Մալխասեան,** նշ. աշխ., հտ. Դ. - քաշովի, ած. գ. փլաւի այն տեսակը, որ պատրաստում են՝ բրնձին կամ կորկոտին որոշ քանակութեամբ (քաշով) ջուր ածելով (բրնձին՝ մէկին մէկ ու կէս, կորկոտին՝ մէկին երկուս), մինչեւ որ ամբողջ ջուրը քաշէ. կոչւում է նաեւ չափովի (թուրք.՝ չէքմէ փիլաւ, վրաց.՝ arcquli plavi, կշռովի փլաւ): Փլաւը ոմանք քաշովի են սիրում, ոմանք՝ քամովի: Քամովին աւելի շուտ է պատրաստւում. հէնց որ բրինձը ջուրը քաշեց՝ կերակուրն արդէն պատրաստ է:

11 **Ստ. Մալխասեան,** նշ. աշխ., հտ. Դ. - փութ, ած. թնթղուց, առանց ոսկորի եւ ճարպի:

աւագութեանը կամ պաշտօնին, կային յայտնի խցեր՝ տեղապահի, լուսարարապետի, գանձապետի, ծախսարարի, որոնք լաւագոյներն էին եւ ունէին բաժանումներ: Վառելիքից զատ տրւում էր եւ ճրագ. սկզբում ճարպի մոմ էր շամտանի[12] վերայ, յետոյ դրան փոխարինեցին այլ տեսակները. արւում էր եւ ամեն մի խցի կահաւորութիւնը, որ շատ պարզ էր, տախտ, բարձեր, կարպետ, գորգ, շատ հազիւ, երկու աթոռ: Վանականներն իրենց առաւօտեան նախաճաշն անում էին խցերում. ամենն իւր ճաշակով եւ իւր կարողութեան համեմատ. սովորական էր մի թեթեւ բան ուտել (հաց ու պանիր, ձու, ձիթապտուղ), որը ողողում էին մի գաւաթ օղիով կամ գինով, ոմանք պատրաստում էին սեւ սուրճ. սամավարի գործածութիւնը կար, դեռ չէր ընդհանրացել, սակայն թէյի համար գիւգիւմով[13] ջուր էին եփում, եւ թէյաման ու բաժակներ էին պահում՝ թէյ պատրաստելու. շատ հաճելի ընծայ էր, երբ որեւէ ուխտաւոր կամ բարեկամ ընծայ էր բերում թէյ. հին եպիսկոպոսները յատուկ նամակներ էին գրում վիճակներին եւ պատուիրում իրենց ուղարկել թէյ եւ ռոմ. այս երկու բանը շատ սիրելի էր: Վանքի մառանը (չիրախանոց)[14] պահւում էր միշտ լաւ գինի, որն առատ տրւում էր վանականներին՝ իւրաքանչիւրին իւր դիրքի համեմատ բաժին յատկացնելով: Այդ ազատութիւնը եւ պատրաստեց վանքում հարբեցող վանականների մեծ թիւ: Առանձին սիրական[15] պատիւ եւ հիւրասիրութիւն էր փունչ[16] շինել ռոմով. դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ կէս բաժակ բաւական մուգ թէյ առատ շաքարով. բաժակի մնացորդը բերնէ-բերան կամ երբեմն միայն որոշ չափով լցնում էին ռոմով. այդ ամենը թողնում էին, որ սառչի եւ ապա խմում էին. առաւօտեան նախաճաշին կենցաղասէր վանականների համար, եւ այդպէս էին մեծ մասը, դա մեծ բաւականութիւն էր: Ուտիս օրերին հետն ուտում էին ապուխտ (պաստուրմա, սուճուխ), կողակ, երբեմն եւ այլ տեղական բաներ: Ահա այդ է սկզբնաւորութիւնն այն տխուր երեւոյթի, որ բուն էր դրել վանքի մէջ. հարբում էին ոչ միայն ծերերը, մեծերը, իշխանաւորները, ունեւորները, այլեւ՝ երիտասարդը, ծառան, ստորադրեալը, ոչ միայն վանքում, այլեւ վանքից դուրս: Յայտնի չէ՝ աշխարհի՞ց մտաւ այդ բանը վանքի մէջ, թէ՞ վանքից աշխարհ. միայն յայտնի է, որ դա վարակել էր քահանաներին եւ իշխաններին եւ ժողովրդին, եւ դարձել էր մի համատարած ախտ:

12 Արաբերէն՝ աշտանակ, մոմակալ:

13 Թուրքերէն՝ կաւէ կամ մետաղեայ ջրաման:

14 Տե՛ս **Ստ. Մալխասեան,** Հայերէն բացատրական բառարան, հտ. Գ., Երեւան, 1944. շիրայ՝ պարսկ. քաղցու, խաղողից մզուած քաղցր հիւթ: Երբ շիրան խմորւում է, շաքարը փոխւում է ալկոհոլի, եւ ստացւում է գինի: Այն շատ ախորժարար եւ սենդարար ըմպելիք է: Իսկ Խան պարսկ. տուն - Շիրաճխանայ՝ գինեվաճառանոց:

15 Տե՛ս **Ստ. Մալխասեան,** նշ աշխ., հտ. Դ. - շատ սիրելի:

16 Անդ. անգլ. եւ ֆրանս. Punch՝ ոգելից խմիչք, որը տարբեր ձեւով պատրաստում են թունդ ոգելից խմիչքից: Լաւ փունչը պատրաստում են ռոմից:

Թուի թէ շատ վաղուցուանից է մտել այդ ախտը Էջմիածին. պատմում են հռչակաւոր Ահարոն վարդապետի մասին Տէր Ղուկաս կաթողիկոսի ժամանակ. պատմում են մի աւանդութիւն, չգիտեմ որ վարդապետի համար, որ Աւագ ուրբաթ օրը սաստիկ հարբած է եղել. նորան կշտամբողներ են եղել, որ գոնէ այդ օրը պէտք է սուրբ պահէր. իսկ նա պատասխանում է՝ ցոյց տալով Մայր Տաճարին. «Քրիստոս ի Խաչին, Կաթողիկոսն ի դագաղին» ասել ուզելով, թէ էլ ումի՞ց պիտի վախենար, որ այն օրը չխմէր: Զաքարեան (Զախարիանով) Գրիգոր եպիսկոպոս Բեսարաբիոյ, ծաղրելով Եփրեմ արքեպիսկոպոսին, որ Ռուսաստանի առաջնորդն էր եւ իւր թշնամին, ի թիւս այլոց, գրում է, թէ Եփրեմ օղիից երբէք աչք չէ բաց անում: Ես տղայ ժամանակս տեսել եմ Ալեքսանդրապոլ հիւր եկած շատ վարդապետներ Բաքոսի ջերմ երկրպագու. չեմ մոռանում Ռափայէլ, Եղիշէ, Փեշտամալճեան Յովհաննէս, Ադիամանցի Կարապետ, Թէոդորոս եւ այլ վարդապետներին, որոնք ամբողջ մարմնով ակռնկում[17], դող էին ելնում, երբ ցոյց էինք տալիս օղիի շիշը. «Բե՛ր, մէկ բե՛ր, այդ օրհնեալ ջուրը, միւռո՛ն է, միւռո՛ն է»...

Վանականներին յառաջ՝ մինչեւ Գէորգ Դ Կաթողիկոսը, պարտաւորաբար նշանակում էին վանքի գործերի մէջ մի բան անելու, բացի նորանցից, որոնք ներսում գործ ունէին, այն է՝ ծախսատար, գանձապետ, հանդերձապետ, մառանապետ, տնտես, շտեմարանապետ, հիւրընկալ, ագարակապետ, այլ կերպ՝ անասնապետ (دام دار - dam dar), *դպրոցի տեսուչ. կային եւ դրսի գործ անողներ. նոցա նշանակում էին զանազան տեղեր գնալու. մէկը պտղի առուած հասոյթն էր հաւաքում, միւսը եղ ու պանիր, մէկէլը նշանակւում էր վանքի սեփական այգիների վերայ կամ գիւղերի բահրան ստանալու եւ այլն: Դոքա բոլորն էլ համարւում էին արդիւնաւոր պաշտօններ. բացի այն, որ ամեն տեղ նոքա ժողովրդից աջհամբոյրներ էին ստանում եւ փառաւոր հիւրասիրւում էին, նոքա միջոց ունէին իրենց հաւաքածից մի մասն իւրացնել, ծախել, եւ վանքի շահերին հակառակ՝ իւր գրպանի շահերը պաշտպանել: Ամենից շատ օգտւում էին նոքա, որ նշանակւում էին կալաչափ[18], այդ գործն ստանալու համար կային այնպիսիները, որ վանքում գլուխ էին պատռում, զանազան խոստումներ անում իշխանաւորներին եւ այլն: Բայց շատերն այդ չէին անում, բայց շահւում էին՝ շահելով ժողովրդին, այսինքն՝ նորանից պակաս վերցնե-*

17 Տե՛ս **Ստ. Մալխասեան,** նշ. աշխ., հտ. Ա. 1. ակռկել (կրռ), կեցի կամ ցայ, չբ. մի բանի կպչել, դէմ առնել. (գրբ.՝ կռուել, կառչել): 2. կոնկռնալ՝ ցրտից ատամներն իրար զարկել, սաստիկ մրսել:

18 Տե՛ս **Անդրանիկ վրդ. Կռանեան,** Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998. պաշտօնեայ, որ չափում էր կալուածատիրական գիւղի կալերը եւ սահմանուած բաժինը վերցնում յօգուտ կալուածատիրոջ. subashi, shahna: Կալաչափը շատ անիրաւութիւններ էր գործում: Պաշտօնեայ, որ կալի եկամուտը չափելով վերցնում էր վանքին կամ եկեղեցուն հասանելիք բաժինը:

լով, մի հասարակ աջհամբոյր ստանալուց յետոյ: Այսպիսի գեղծումները, իհարկէ, չէին ծածկւում եւ կրկնակի գայթակղութիւն էին պատճառում: Միւս՝ աւելի շահաւէտ գործն էր ներկայացուցիչ լինել նշանաւոր վանքերի ուխտի ժամանակ էջմիածնի կողմից, եւ արդիւնքներն ու նուէրները հաւաքել ու բերել վանք. այսպիսի գործի համար նշանակւում էին երբեմն մի եպիսկոպոս եւ երկու վարդապետ. յիշում եմ 1857 թուին Մուղնու Ս. Գէորգի ուխտի եկած էր Գէորգ եպիսկոպոս Վեհապետեան եւ երկու վարդապետ, բացի վանահօրից. վարդապետներից մէկն էր Յովհան վարդապետ Քեանդարեան Ալեքսանդրապոլցի: Այդպիսի ուխտերէն թէեւ շատ էր հաւաքում, բայց միշտ համարեա չնչին նշխարներն էին մտնում էջմիածնի գանձարանը, ամեն անգամ էլ գեղծումը բացւում էր եւ անպատիժ էր մնում շատ հասկանալի պատճառով. չէ՞ որ հզօրները մասնատրւում էին: Ինձ պատահեցաւ մի անգամ հաւաստի լինել մի գեղծման, որի դատաստանն Աստուած կտրեց: Զրախլեցի[19] Մամբրէ վարդապետը, Գէորգ Դ.-ի ժամանակ շատ տարիներ ագարակապետ էր, որքան յիշում եմ, Մակարի տեղապահութեան օրով ուղարկուեցաւ Մուղնի արդիւնքներին վերատեսուչ. նորան ուղարկեցին, որովհետեւ Երուսաղէմում էր կրթուել եւ դաստիարակուել, գիտէր ուխտաւոր շահել, քարոզ խօսել, եւ յայտնի չէ, ո՞ր բարեմասնութիւնների համար սուրբ եւ առաքինի մարդու համբաւ ունէր: Ուխտաւորների ցրուելուց յետոյ նա մատեաններն ու արդիւնքները բոլոր հաշիւներով իւր օգնականի ձեռքով ուղարկում է էջմիածին եւ ինքը մնում է մի երկու օր հանգստանալու եւ ապա վերադառնալու. եւ այդ ժամանակ յանկարծ հիւանդանում է, մինչեւ բժիշկ են տանում էջմիածնից, օգնութեան են հասնում, նա մեռնում է. նորա իրերն անմիջապէս կնքում են. եւ երբ խուրջինը բերին էջմիածին, նորա միջից ելաւ մի կլորիկ գումար, ուրիշ քաղած նուէրներ եւ մի քանի ոսկի՝ զանազան տեսակի: Պարզ էր, որ այդ ամենը նա քաղել էր ուխտի արդիւնքներից: Երբ ես ասացի գանձապետին, թէ տեսաք ինչպէս Աստուած աւելի շուտ եւ արդար դատաստան արաւ քան թէ ձեր Սինոդը, նա պատասխանեց. «Հէ՛ր օրհնած, - ասաց, - մի՞թէ Աստուած մինակ դրան տեսաւ, դէ՛ խսկի չի եղել, Մուղնի գնացողը մեծ բաժինն իրեն չվերկալի, հրէնի՛կ Սինոդի գործերում ինչքան օրինակներ կան, տե՛ս հալա՛ սա փոքր մասն է վերցրել...»: Դժբախտաբար, նորա ուսումն ուղիղ էր: Ընդհակառակը եղել են դէպքեր, որ ուխտատեղ գնացող վարդապետը, գնացել վերադարձել է դատարկաձեռն, այնտեղ, իհարկէ, կերել խմել է, ուրիշներին էլ շահել է եւ երբ իւր տեղն է վերադարձել, վանքի գանձարանից էլ յատուկ ծախս է պահանջել գնալ գալու համար: Վարդապետների այսպիսի

19 Այժմ՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, գիւղ Արտաւան:

անհաւատարմութիւնն է պատճառը, որ շատ տեղ նորանց կողքին դնում են եւ աշխարհական գանձապահ - օգնականներ, թէեւ սոքա էլ, ինչպէս յայտնի է, պակաս չեն եղել նորանցից մի քանի տեղերում:

1. *Մոնթական դրութիւն (մանկլաւիկ),*
2. *Գինեմոլութիւն,*
3. *Կաշառակերութիւն,*
4. *Զօշաքաղութիւն (իւրայիններին շահել),*
5. *Անառակութիւն (կին եւ առեւանգումն):*

ա. Ներսէս Ե.-ի շրջանից՝

1. *Ղուկաս արքեպիսկոպոս,*
2. *Գէորգ եպս. Վեհապետեան,*
3. *Սարգիս եպս. Ջալալեան,*
4. *Մակար եպիսկոպոս:*

բ. Մատթէոս Ա.-ի շրջանից՝

1. *Վրթանէս եւ Արիստակէս,*
2. *Սուքիաս Թաղիանոսեան,*
3. *Անդրէաս եպիսկոպոս,*
4. *Աբէլ եպս. Մխիթարեան,*
5. *Եղիազար եպիսկոպոս,*
6. *Վարդան եպս. Օձնեցի,*
7. *Վասակեան վարդապետ,*
8. *Յովակիմ Շամխորեան,*
9. *Գրիգոր Մուշեղեան:*

РЕЗЮМЕ

В публикации епископа Геворга Сарояна «К мемуарам Карапета Костаняна «Отрывки из монашеской жизни Святого Эчмиадзина» преставляется материал об истории монашеской жизни братии Первопрестольного, о быте и облачении, об уставе и нравах, о правилах, координирующих внутренние взаимоотношения среди монахов. Данная работа может иметь практическое применение в организации плодотворной жизни братии Святого Эчмиадзина и способствовать восстановлению утраченных благочестивых традиций и обычаев, которые могут наделить эту исторически богатую среду присущим монашеской жизни своеобразным благоуханием и внутренним притяжением.

SUMMARY

The publication by Bishop Gevorg Saroyan of Karapet Kostanyan's ***Scenes from the Monastic Life of Holy Etchmiadzin*** provides access into the history of monastic life in Saint Etchmiadzin at the dawn of the twentieth century, including daily life, manners and customs, and the norms governing human relationships. Additionally, it could also serve as a basis upon which to reconstruct present-day monastic life in an efficient and productive manner, by reinstating forgotten or ignored traditions and customs, and helping turn life in this historical monastic milieu into an attractive and uniquely enjoyable experience.